А. В. КОСЯН, *Лувийские царства Малой Азии и прилегающих областей в XII—VIII вв. до н. э.* (по иероглифическим лувийским источникам), Изд-во «Гитутюн» НАН РА, Ереван, 1994, 150 с.

Ա. Վ. ՔՈՍՅԱՆ, Լուվիական թագավորությունները Փոքր Ասիայում և հարակից շրջաններում մ. թ. ա. XII—VIII դդ. *(ըստ հիերոգլիֆային լուվիերեն աղբյուրների), ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 1994, 150 էջ։*

Մ. թ. ա. 1200 թ. սահմաններում տրոհվեց Հին Արևելքի հզորագույն տերություններից մեկը՝ Խեթական պետությունը։ Այնուհետև, մ. թ. ա. VI դ. կեսերին, նրա փոքրասիական տիրույթները նախ նվաճեց Լիդիայի թագավոր Կրեսոսը, ապա՝ Աքեմենյան պետության հիմնադիր Կյուրոսը։ Այս երկու իրադարձությունների միջև ընկած ավելի քան վեցդարյա ժամանակաշրջանի առաջին մասը (XII—X դդ.) ընդունված է համարել «խավար դարաշրջան», այն իմաստով, որ մինչև վերջերս ուսումնասիրողներին շատ քիչ բան էր հայտնի այստեղ տեղի ունեցած իրադարձությունների մասին։ Ինչ վերաբերում է մ. թ. ա. IX—VI դդ. պատմությանը, ապա ուսումնասիրությունների աղբյուրագիտական հենքը կազմում էին օտար՝ միջագետքյան և ուրարտական սեպագիր աղբյուրները, ինչպես նաև անտիկ հեղինակների աշխատությունները, առաջին հերթին՝ Հերոդոտոսի երկը։ Խեթական տերության անկումից հետո նրա տարածքի մի զգալի մասում (Արևելյան Փոքր Ասիա և Հյուսիսային Սիրիա) ձևավորված լուվիական կամ ուշ խեթական բազմաթիվ պետություններից հայտնի լուվիական հիերոգլիֆային (այսուհետև՝ ԼՀ) արձանագրությունների նյութը գրի թերի ուսումնասիրման պատճառով գրեթե հաշվի չէր առնվում։ Պ. Մերիջիի, Թ. Բոսսերտի, Ի. Գելբի, Գ. Գյուտերբոկի, Է. Լարոշի, Դ. Հոկինսի և այլոց շնորհիվ 1950—70-ական թվականներին ԼՀ արձանագրությունները ի վերջո գիտական շրջանառության մեջ դրվեցին՝ վերածվելով լուվիական պետականության պատմության կարևորագույն սկզբնաղբյուրների։ Խորհրդային շրջանի պատմաբաններից նույն բնագավառում որոշակի ավանդ ունեն սակավաթիվ ուսումնասիրողներ (Ի. Դյակոնովը, Ի. Դունայևսկայան, Ն. Խաղարաձեն)։

Լուվիական պետությունների պատմության ուսումնասիրությունը կարևորվում է նրանով, որ վերջիններիս անմիջական հարևաններն էին Հայկական լեռնաշխարհի արևմուտքի պետական կազմավորումները՝ Արմե-Շուբրիան, Ալզի-Աղձնիքը, Իսուվա-Ծոփքը։ Բացի այդ, լուվիական Մելիդի տարածքը հետագայում հայտնի էր որպես Փոքր Հայք, մի բան, որ խիստ կարևոր է հայկական էթնոսի տարածման արևելի ուսումնասիրման տեսանկյունից։

Ահա վերոհիշյալ պետությունների պատմությանն է նվիրված վերջերս Ա. Քոսյանի հրատարակած «Լուվիական թագավորությունները Փոքր Ասիայում և հարակից շրջաններում մ. թ. ա. XII—VIII դդ. (ըստ հիերոգլիֆային լուվիերեն աղբյուրների)» ուսումնասիրությունը։

Աշխատության վերնագիրն արդեն իսկ հուշում է ուսումնասիրության ուղղվածությունը և հիմնական նպատակը։ Հեղինակն իր առջև խնդիր չի դրել ներկայացնելու լուվիական բոլոր պետությունների պատմության համակողմանի ուսումնասիրությունը կազմավորման պահից մինչև անկում։ Նման աշխատանքը արդարացված չէր լինի թեկուզ այն պատճառով, որ ԼՀ արձանագրությունների ուսումնասիրման արդի մակարդակը դեռևս անբավարար է։ Ուստի, Ա. Քոսյանն ընտրել է միակ ճիշտ ուղին՝ համակողմանի քննության առնել ԼՀ արձանագրությունները ըստ պետությունների և փորձել գիտական շրջանառության մեջ գնել այդ նյութը՝ այդպիսով հող նախապատրաստելով հետագա հիմնավոր ուսումնասիրությունների համար։ Հեղինակի այս միտումով է բացատրվում նաև միջագետքյան և ուրարտական սեպագրական աղբյուրների սահմանափակ, ընտրովի օգտագործումը։ Դրանք կիրառվում են այս կամ այն լուվիական պետության պատմության լուսաբանման համար ընդհանուր ֆոն ստեղծելու նպատակով։

Մենագրության առաջին գլուխը, որ կոչվում է «Լուվիական հիերոգլիֆային արձանագրությունները», ունի աղբյուրագիտական կողմնորոշում։ Այստեղ քննարկված են ԼՀ գրի առանձնահատկությունները, արձանագրությունների բնույթը, նրանց տարածման շրջանակները, ժամանակագրությունը և կառուցվածքը։ Հեղինակն առանձնացնում է ԼՀ կիրառման երեք տարածաշրջաններ՝ Մելիդ, Թաբալ և Հյուսիսային Սիրիա (էջ 12), մի բան, որ, թերևս, վկայում է

նաև նշված տարածքների քաղաքական-մշակութային առանձնահատկությունների մասին։

Աշխատության առավել ծավալուն և կարևոր մասը հաջորդ երկու գլուխներն են, որտեղ ներկայացված են Փոքր Ասիայի և Հյուսիսային Սիրիայի թվով տասնմեկ պետություններին վերաբերող նյութերը։ Ա. Քոսյանը, բացի հիերոգլիֆային նյութի և սեպագիր աղբյուրների տվյալների ավանդական համադրումից, հատուկ քննության է առնում այլոց մոտ գրեթե չշոշափված երկու կարևոր խնդիրներ՝ 1) լուվիական պետականության աստիճանական զարգացումը սկզբնավորման պահից, 2) լուվիական պետությունների փոխհարաբերությունները։

Քննարկելով մի շարք հյուսիսսիրիական արձանագրություններ՝ հեղինակն առաջարկում է մի վարկած, ըստ որի, խեթական տերության տրոհումից հետո մինչև մ. թ. ա. X դ. երկրորդ կեսը Հյուսիսային Սիրիայի դգալի մասը գտնվել է Կարգամիսի կազմում։ Վերջինիս տրոհումը, որը հետևանք էր դինաստիական պայքարի, հանգեցրեց նոր պետությունների՝ Թիլ-Բարսիպի, Համատի և Գուրգումի կազմավորմանը (էջ 73)։ Այս վարկածի մի կարևոր բաղկացուցիչ մասն է ներկա մենագրության տպագրության հանձնումից հետո Ա. Քոսյանի մի շարք զեկուցումներում և հոդվածներում առաջ քաշված տեսությունը, որի էությունը հետևյալն է. խեթական տերության տրոհումից հետո նրա տարածքի դգալի մասում կազմակերպվել են երեք խոշոր պետություններ՝ Մելիդը, Կարգամիսը և «Խարտապուսի պետությունը» (հետագայի Թարալի տարածքը)։ Մ. թ. ա. X—IX դդ. ընթացքում Կարգամիսի և «Խարտապուսի պետության» տրոհման արդյունքում առաջացան մի քանի տասնյակ մանր թագավորություններ և իշխանություններ։ Այսպիսով, հետխեթական շրջանի լուվիական պետականությունը զարգացել է աստիճանական տրոհման ուղիով։

Աշխատության մեջ զգալի տեղ է հատկացվում լուվիական պետությունների պատմության մի շարք կարևոր խնդիրներին՝ արքայացանկեր, զբաղեցրած տարածքների և առանձին տեղանունների ճշգրտում, ժամանակագրություն և այլն։ Նորույթ պիտի համարել Մելիդի երեք արքաների (Յարրիթարխունտաս, Տարաս և Ռունտիյաս) վարած ակտիվ քաղաքականության վերաբերյալ հատվածը (էջ 22—28)։ Քննելով այս արքաների արձանագրություններում հիշատակվող տեղանունները՝ հեղինակը հանգել է հետաքրքիր եզրակացության այն մասին, որ մ. թ. ա. XII—X դդ. Մելիդը եղել է Փոքր Ասիայի հզորագույն պետությունը, որի տիրապետության տակ էր գտնվում Եփրատից մինչև Հալիս գետի (այսօրվա Կըզըլըրմակ) մեծ ոլորանի շրջանը։

Նորույթ է նաև Կարգամիսի արքաներ Սուխիս II-ի և Կատուվասի կառավարման վերականգնմանը նվիրված հատվածը, որի հետ սերտորեն առնչվում է «Թիլ-Բարսիպի» արձանագրությունների նյութը (էջ 59—65)։

Մենագրության չորրորդ գլուխը նվիրված է լՀ արձանագրություններում վկայված տեղանվանական և անվանաբանական նյութերին։ Հեղինակը մի քանի տասնյակ տեղանունների և անձնանունների օրինակով ներկայացնում է լՀ լեզվում դրանց կազմավորման եղանակները։ Աշխատության այս բաժնի արժեքն այն է, որ ուսումնասիրվող նյութի դգալի մասը ուղղակի զուգահեռներ չունի ավելի վաղ շրջանի խեթա-լուվիական լեզուներում (խեթերենում, սեպագիր լուվիերենում և պալայերենում)։ Կարևոր է նաև խեթալուվիական անձնանունների կողքին որոշ քանակությամբ այլ ծագման (գերազանցապես խուրրիական) նյութի առանձնացումը։ Այս նյութի ուսումնասիրությունը, հեղինակի կարծիքով, թույլ է տալիս պնդելու, որ ողջ հետխեթական շրջանում լուվիական պետությունների մեծ մասում գերակշիռ, վճռորոշ էթնոսը եղել է խեթա-լուվիաները, և որ անխախտ կերպով շարունակվել է խեթական պետության շրջանում ձևավորված մշակութային ավանդույթը (էջ 97)։

Մենագրությունը եզրափակվում է ընդարձակ ծանոթագրություններով (էջ 106—143) և ժամանակագրական աղյուսակով։

Այսպիսով, Ա. Քոսյանի մենագրությունը վստահորեն կարելի է նոր խոսք համարել մ. թ. ա. XII—VIII դդ. Փոքր Ասիայի և Հյուսիսային Սիրիայի պատմության ուսումնասիրման ասպարեզում։ Աշխատությունը, անկասկած, հաջողված է, քանի որ հեղինակը հասել է իր առջև դրված խնդրի լուծմանը։ Փոքր Ասիայի և հարակից երկրների պատմության հետազոտողների ուշադրությանն է ներկայացվում լՀ արձանագրությունների՝ արդի մակարդակին համապատասխան մի կարևոր ուսումնասիրություն, որը գիտական լայն շրջանառության մեջ է մտցնում հարուստ փաստական նյութ։ Մնում է միայն տարակուսել, թե ինչո՞ւ հայ ժողովրդի վաղ պատմության հետ սերտորեն առնչվող այս կարևոր մենագրությունը լույս է տեսել ընդամենը 500 օրինակ տպաքանակով և պոլիգրաֆիական բազմաթիվ թերություններով։

Հ. Ժ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու